ՏԵՂԵԿԱՆՔ

Համաձայն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 397-Ա հրամանի և ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ 1233-Ն որոշման 5-րդ կետի, հայտնում ենք, որ <<Երևան Ջուր>> ՓԲԸ-ի գործունեությունը դադարում է 2017 թվականի հունվարի 1-ից, ինչով պայմանավորված ՀՀ Ազգային ժողովի և <<Երևան Ջուր>> ՓԲԸ-ի միջև կնքված 2013 թվականի օգոստոսի 22-ի թիվ 4-12-10 պայմանագիրը լուծարվում է, իսկ խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման համար 2017 թվականի հունվարի 30-ին ՀՀ Ազգային ժողովի և <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ի միջև կնքվել է թիվ 4-12-10 ծածկագրով նոր պայմանագիր, ինչով պայմանավորված խնդրում ենք տալ դրական եզրակացություն:

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ
ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ Վ. ԹՈՐՈՍՅԱՆ

15.02.2017թ.

600.0397.09.12.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

9 դեկտեմբերի 2016 թվականի №397Ա
ք.Երևան

«ՎԵՌԼԻԱ ՋՈՒՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՏԱԿԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ (ԿԵՂՏԱՋՐԵՐԻ ՄԱՔՐՄԱՆ) ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 38-րդ, 39-րդ, 40-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 2-ի №295Ն որոշումը և հաշվի առնելով «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության 2016 թվականի նոյեմբերի 25-ի հայտը և նույն ամսվա 30-ի №ԿԼ/05 գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը որոշում է.

1. «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրել խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման լիցենզիա՝ մինչև 2031 թվականի դեկտեմբերի 31-ը գործողության ժամկետով:
2. Հաստատել «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման լիցենզիայի պայմանները՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
9 դեկտեմբերի 2016թ.

Համարը N 1233-Ն
Տիպը Որոշում
Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2015.10.29/73(1162) Հոդ.934
Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն
Ստորագրող մարմինը ՀՀ վարչապետ
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 30.10.2015

Տեսակը Հիմնական
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Երևան

Ընդունման ամսաթիվը 15.10.2015
Ստորագրման ամսաթիվը 26.10.2015
Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը

⊞ Կապեր այլ փաստաթղթերի հետ
⊞ Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ «ԵՐԵՎԱՆ ՁՈՒՐ», «ՀԱՅՁՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ», «ԼՈՌԻ-ՁՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ», «ՇԻՐԱԿ-ՁՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ» ԵՎ «ՆՈՐ ԱԿՈՒՆՔ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՈՒ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՋՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ (ՎԱՐՁԱԿԱԼԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ) ՁԵՎԸ, ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԿԻՐԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ, ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿՑԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՆԱԽԱՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ (ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ) ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 14-Ի N 883-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 14-Ի N 888-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հոկտեմբերի 2015 թվականի N 1233-Ն

«ԵՐԵՎԱՆ ՁՈՒՐ», «ՀԱՅՁՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ», «ԼՈՌԻ-ՁՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ», «ՇԻՐԱԿ-ՁՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ» ԵՎ «ՆՈՐ ԱԿՈՒՆՔ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՈՒ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՋՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ (ՎԱՐՁԱԿԱԼԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ) ՁԵՎԸ, ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԿԻՐԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ, ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿՑԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՆԱԽԱՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ (ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ) ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 14-Ի N 883-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 14-Ի N 888-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետով, 18-րդ և 21-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի օգոստոսի 14-ի N 883-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի օգոստոսի 14-ի N 888-Ն որոշումները և հաշվի առնելով գործընթացների անցումային խորհրդատուի առաջարկությունը, ինչպես նաև ջրային համակարգերի կառավարման արդյունավետության հետագա բարձրացման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է.*

1. Սահմանել, որ՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի օգոստոսի 14-ի «Երևան Ձուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից սպասարկվող տարածքներում պետական-մասնավոր գործընկերության ձևը և ժամկետը սահմանելու մասին» N 888-Ն որոշմամբ նախատեսված «Երևան Ձուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի (այսուհետ՝ գույք) օգտագործման իրավունքը վարձակալությամբ փոխանցելու գործընթացի շրջանակում վարձակալ կազմակերպության ընտրությունը կազմակերպվելու է մրցակցային երկխոսության ընթացակարգով (այսուհետ՝ գնում)՝ համաձայն «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի.

2) գնման ընթացակարգը կիրարկվում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն որոշմամբ սահմանված կարգով.

3) նախաորակավորման մասին հայտարարությունը, նախաորակավորված մասնակիցների ցուցակը, գնման ընթացակարգի արդյունքները, ինչպես նաև գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագիրը կնքվում կամ հաստատվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հավանության արժանանալու դեպքում: Ընդ որում, սույն ենթակետում նշված փաստաթղթերը Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանն են ներկայացվում դրանց վերաբերյալ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 19-ի N 140-Ա որոշմամբ

ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացության հետ միասին:

2. Սահմանել գնման ընթացակարգի մասնակցին ներկայացվող նախաորակավորման (որակավորման) պահանջները՝ համաձայն հավելվածի:

3. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետով սահմանված գնման պատվիրատու է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեն:

4. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահին՝

1) կազմակերպել գնման ընթացակարգի անցկացումը՝ հիմք ընդունելով սույն որոշման հավելվածի նախաորակավորման (որակավորման) պահանջները, ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կետի 3-րդ ենթակետով նախատեսված գնում կատարելու ընթացակարգի կիրարկման կարգով.

2) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկշաբաթյա ժամկետում մշակել նախաորակավորման մասին հայտարարության տեքստը և կազմակերպել նախաորակավորման ընթացակարգի անցկացումը՝ հիմք ընդունելով սույն որոշման հավելվածի նախաորակավորման (որակավորման) պահանջները և ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով.

3) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում մշակել նախաորակավորված կազմակերպությունների մասնակցությամբ գնում կատարելու ընթացակարգի կիրարկման կարգն ու գնման հրավերի տեքստը և ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարություն՝ հաստատման.

4) գնումը կազմակերպելիս և անցկացնելիս՝ հաշվի առնել գործընթացների անցումային խորհրդատուի առաջարկությունները:

5. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի օգոստոսի 14-ի «Պետական-մասնավոր գործընկերության հետագա զարգացմանն ուղղված՝ Հայաստանի խմելու ջրի ոլորտի բարեփոխումների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 883-Ն որոշման 1-ին կետով հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 4-րդ կետի 4-րդ սյունակում «հոկտեմբեր» բառը փոխարինել «դեկտեմբեր» բառով.

2) 6-րդ կետի 4-րդ սյունակում «հունվար» բառը փոխարինել «հուլիս» բառով.

3) 7-րդ կետի 4-րդ սյունակում «փետրվար» բառը փոխարինել «սեպտեմբեր» բառով.

4) 8-րդ կետի 4-րդ սյունակում «մարտ» բառը փոխարինել «հոկտեմբեր» բառով.

5) 9-րդ կետի 4-րդ սյունակում «2016 թ. հունիսի 1» բառերը փոխարինել «2017 թ. հունվարի 1» բառերով:

6. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի օգոստոսի 14-ի «Երևան Զուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից սպասարկվող տարածքներում պետական-մասնավոր գործընկերության ձևը և ժամկետը սահմանելու մասին» N 888-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում «2016 թվականի հունիսի 1-ից» բառերը փոխարինել «2017 թվականի հունվարի 1-ից» բառերով:

7. Լիազորել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահին բանակցել «Հայջրմուղկոյուղի», «Նոր Ակունք», «Լոռի-ջրմուղկոյուղի» և «Շիրակ-ջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերությունների կառավարիչների՝ համապատասխանաբար «Սաուր» ընկերության և «էմ Վի Վի դեկոն Ձի էմ Բի էյջ», «էմ Վի Վի էներջի էյ Ձի», «էյ-Ի-Ձի-Սերվիս», «ՍԱՈՒՐ» ընկերությունների կոնսորցիումի հետ՝ նրանց հետ կնքված կառավարման պայմանագրերի գործողության ժամկետները երկարաձգելով մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը:

8. Առաջարկել Երևանի քաղաքապետին բանակցել «Վեոլիա» ընկերության հետ՝ նրա հետ կնքված «Երևանի ջրմուղ-կոյուղի» փակ բաժնետիրական ընկերության սպասարկման տարածքի ջրային համակարգերի վարձակալության մասին պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելով մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը:

9. Առաջարկել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին երկարաձգել սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում նշված ընկերություններին տրամադրված ջրային համակարգերի օգտագործման թույլտվությունների գործողության ժամկետները:

10. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարին՝ երկարաձգել «Երևան Զուր» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված ջրօգտագործման թույլտվության և կոյուղու կոլեկտոր թափվող կեղտաջրերով վնասակար նյութերի սահմանային արտահոսքի նորմաների գործողության ժամկետները:

11. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին՝ երկարաձգել սույն որոշման 7-րդ և 8-րդ կետերում նշված ընկերություններին տրամադրված՝ չափիչ սարքերի ստուգաչափման վկայականների գործողության ժամկետները:

12. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Հ. Աբրահամյան

2015 թ. հոկտեմբերի 26
Երևան